

## Ինտեգրացիան Նիդերլանդներում

Նիդերլանդներում հարկավոր է քննություններ հանձնել՝ խոսքը Նիդերլանդներում անցկացվող ինտեգրման քննության մասին է: Այս քննությունը ավելի դժվար է քան տարրական քննությունը քանի որ այստեղ լեզուն ավելի լավ են սովորեցնում: Բացի դրանից դրա շնորհիվ ավելի մեծ գիտելիքներ եք ձեռք բերում Նիդերլանդների մասին՝ ինչը ձեզ հնարավորություն կտա ավելի լավ ինտեգրվել Նիդերլանդների հասարակությանը՝ ունենալով աշխատանք գտնելու առավել մեծ շանսեր:

Քննությունները բաղկացած են 6 մասից՝

1. Կարդալու հմտություններ – հարկավոր է սովորել նիդերլանդերեն կարդալ
2. Լսելու հմտություններ - հարկավոր է սովորել նիդերլանդերեն հասկանալ
3. Գրելու հմտություններ – հարկավոր է սովորել նիդերլանդերեն գրել
4. Խոսելու հմտություններ – հարկավոր է սովորել նիդերլանդերեն խոսել
5. Նիդերլանդների հասարակությանը վերաբերող գիտելիքներ – հարկավոր է ծանոթանալ Նիդերլանդներում միմյանց հետ շփվելու կարգուկանոնին և երկրում կիրառվող օրենքներին:
6. Կողմնորոշում Նիդերլանդների աշխատանքային շուկայի շուրջ – հարկավոր է աշխատանք գտնել

Ինչպե՞ս են իրականացվում քննությունները գործնականում:

1. Կարդալու հմտություններ  
Քննությունը հանձնում եք համակարգչի միջոցով: Կարդում եք տեքստեր որոնք օրինակ թերթերից են վերցվել: Յուրաքանչյուր տեքստի վերաբերյալ տրվում են մի շարք բազմակի ընտրության հարցեր՝ որոնցից ընտրում եք ստույգը:
2. Լսելու հմտություններ  
Քննությունը հանձնում եք համակարգչի միջոցով: Դիտում եք տեսահոլովակներ և լսում տեքստերը: Յուրաքանչյուր տեսահոլովակի վերաբերյալ տրվում են մի շարք բազմակի ընտրության հարցեր՝ որոնցից ընտրում եք ստույգը:
3. Գրելու հմտություններ  
Քննությունը հանձնում եք թղթի վրա: Տրվում են տարբեր տեսակի առաջադրանքներ, օրինակ՝
  - Գրել կարճ նամակ
  - Լրացնել ձևաթերթիկ
  - Լրացնել նախադասություններ
  - Ընկերոջը հղել շնորհավորական էլ-նամակ
  - Լրացնել աշխատանքի գործակալության դիմումաթերթիկ
  -
4. Խոսելու հմտություններ  
Քննությունը հանձնում եք համակարգչի միջոցով: Քննությունը բաղկացած է երկու մասից՝
  1. Տրվում են հարցեր որոնց հարկավոր է բարձրաձայն պատասխանել:
  2. Դիտում և լսում եք տեսահոլովակներ որոնց մասին տրվում են բազմակի ընտրության հարցեր՝ որոնցից ընտրում եք ստույգը:
5. Նիդերլանդների հասարակությանը վերաբերող գիտելիքներ  
Քննությունը հանձնում եք համակարգչի միջոցով: Դիտում և լսում եք տեսահոլովակներ: Յուրաքանչյուր տեսահոլովակի վերաբերյալ տրվում են մի շարք բազմակի ընտրության հարցեր՝ որոնցից ընտրում եք ստույգը:

6. Կողմնորոշում Նիդերլանդների աշխատանքային շուկայի շուրջ  
Քննությունը բաղկացած է երկու մասից՝
1. Կազմում էք անձնական թղթապանակ՝ այնտեղ օրինակ հավաքելով տեղեկություններ  
ձեր հմտությունների մասին և ձեր նախընտրությունները աշխատանքային  
ուրրտում՝ այժմ և հետագայում: Այդ ամբողջական փաթեթը անվանուն ենք ‘պորտֆոլիո’  
(տես՝ աղյուսակը):
  2. Ձեր պորտֆոլիոն կենթարկվի քննարկման և հավանության դեպքում կհրավիրվեք  
գրույցի՝ որը հիմնականում լինելու է պորտֆոլիոյի բովանդակության մասին:

Հարկավոր է անձամբ ջանքեր գործադրել քննությունը հաջողակ կերպով հանձնելու ուղղությամբ և  
հարկավոր է սովորել, պարապել և խնդիրների լուծման համար անձամբ օգնություն որոնել:  
Ինտեգրման դասընթացներին մասնակցելով կարող եք մեծացնել ինտեգրման քննությունից  
անցնելու շանսը: Սակայն ինտեգրման դասընթացներին մասնակցելը պարտադիր չէ: Ինտեգրման  
դասընթացներին մասնակցելու ցանկության դեպքում այցելել՝ [www.ikwilinburgeren.nl](http://www.ikwilinburgeren.nl):  
Քննությունների և դասընթացների հետ կապված ծասխերը պետք է հոգալ անձամբ: Անբավարար  
ֆինանսական կարողությունների դեպքում կարող եք գումար փոխառել DUO  
կազմակերպությունից՝ դասընթացների ինչպես նաև քննության ծախսը հոգալու համար:  
Փոխառության գումարը հարկավոր է հետագայում շահատուկոսով վերադարձնել:

Պորտֆոլիոն ինչի՞ համար է:

Աշխատանք գտնելը և աշխատատեղ պահպանելը բավականի դժվար է: Այդ իսկ նպատակին  
ծառայում է պորտֆոլիոն, որը ի վերջո ձեր մասին և ձեր աշխատանքային ուրրտում  
ընդունակությունների մասին տարբեր կարգի ինֆորմացիա պարունակող թղթապանակ է: Եթե  
2015թ.-ի հունվարի 1-ից կամ ավելի ուշ ստանալու եք ձեր մնալու իրավունքը՝ ապա պորտֆոլիոն  
քննությունների (Կողմնորոշում Նիդերլանդների աշխատանքային շուկայի շուրջ՝ քննության) մաս  
է կազմում 2015թ.-ի հունվարի 1-ից: Լրացուցիչ մանրամասնություններին ծանոթանալու համար  
այցելել՝ [www.inburgeren.nl](http://www.inburgeren.nl):

Ի՞նչ է պարունակելու ձեր պորտֆոլիոն:

Ձեր պորտֆոլիոյում ընդգրկվելու են այդպես կոչված արդյունքային քարտեր, որոնք գրվելու են ձեր  
կողմից՝

- Գտեք ձեզ համար նախընտրելի աշխատանքը՝ գրելով այն քարտի վրա:
- Գտեք ձեր կարողությունների համաձայն աշխատանքը՝ գրելով այն քարտի վրա:
- Գտեք աշխատանքի թափուր տեղեր՝ գրելով այն քարտի վրա:
- Սովորեցեք ինչպես են աշխատում Նիդերլանդացիները՝ ուսումնասիրելով այն հարցը թե  
ի՞նչ է հարկավոր ձեզ փոխել Նիդերլանդներում աշխատանքի անցնելու համար, ապա  
գրեցեք այն ինչ հարկավոր է փոխել:
- Ուսումնասիրեք ապագայում նախընտրելի աշխատանքի հնարավորությունները՝ կազմելով  
պլան , մանսնագիտական գործունեության պլանավորում: